

ԱՇՈՏ ԱՐՐԱՀԱՄՅԱՆ

Լրացավ վաստակաշատ հայագետ, գիտության վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայկական ՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Աշոտ Արսենի Արարահայանի ծննդյան 60 և գիտամանկավարժական գործունեության 40-ամյակը:

Ա. Արարահայանը ծնվել է Սևանի շրջանի Գեղավան գյուղում, հողագործի ընտանիքում: Տարրական կրթությունը ստացել է գյուղում, միջնակարգը՝ Երևանում: 1937 թվականից իրեն նվիրել է մանկավարժական գործունեության: 1943 թ. փայտյան կերպով ավարտելով Երևանի հեռակա մանկավարժական ինստիտուտը՝ ընդունվել է Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ասպիրանտուրան հայոց լեզվի պատմության գծով, աշակերտել է Հ. Աճառյանին, Գ. Ղափանցյանին, Ա. Ղարիբյանին: 1948 թ. պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա՝ «Հայերենի դերբայները և նրանց ձևարանական նշանակությունը» թեմայով: 1963 թ. պաշտպանել է դոկտորական դիսերտացիա, 1964 թ. ստացել պրոֆեսորի կոչում: 1944 թ. անընդմեջ աշխատում է Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում՝ դասավանդելով գրաբար, հայոց լեզվի թեսություն, լեզվաբանության ներածություն: 1961 թ. նույն ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնի վարիչն է: 1950—1959 թթ. աշխատել է նաև Հայկական ՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող և ժամանակակից հայերենի բաժնի վարիչ, 1977 թ. համարաբարձր քարտարանի բաժնի վարիչն է:

Մեծ է Ա. Արարահայանի գիտական հետաքրքրությունների շրջանակը: Գրեթե չկա հայերենագիտության մի բնագավառ, որի մասին նա ասած չլիներ իր ծանրակշիռ խոսքը: Բավական է ասել, որ նա հեղինակ է շուրջ 80 գիտական աշխատությունների, որոնք ունեն հիմնականում լեզվաբանական-քերականագիտական և բանասիրական-տեքստաբանական բնույթ: Գնահատելու համար Ա. Արարահայանի գիտական վաստակը բավական է անդրադառնալ դրանցից կարևորագույններին:

Լեզվաբանական-քերականագիտական աշխատություններից առաջինը 1952 թ. լույս տեսած և հետագայում երեք վերամշակված հրատարակություն ունեցած գրաբարի բուհական ձեռ-

նարկն է, որը լավագույններից է իր տեսակի մեջ և որով շուրջ երեք տասնամյակ ուսանողությունը (և ոչ միայն ուսանողությունը) սովորում է գրաբար: Աշխատությունն աչքի է ընկնում կուռ կառուցվածքով, խոր գիտականությամբ, գրաբարի քերականական իրողու-



թյունների հմուտ վերլուծությամբ և մեկնաբանություններով, նյութի մատուցման մատչելիությամբ, փաստական հարուստ նյութով: Թեև այն համարվում է ձեռնարկ, սակայն հին հայերենի գիտական խոր և համակողմանի ուսումնասիրություն է և այդ առումով սեղանի գիրք է բոլոր նրանց համար, ովքեր զբաղվում են հայերենով, առանձնապես հայոց լեզվի պատմությամբ:

Իր գիտական գործունեության զգալի մասը Ա. Արարահայանը նվիրել է բայի ուսումնասիրությանը: Դժվար է գերազնահատել այս բնագավառում կատարած նրա աշխատանքը: Դեռևս 1953 թ. լույս ընծայած «Հայերենի դերբայները և նրանց ձևարանական նշանակությունը» աշխատության մեջ նա սպառիչ մանրամասնությամբ տվեց հայերենի դերբայական համակար-

դի զարգացման պատմությունը, դերբայների դրսևորումները գրաբարում, միջին հայերենում, քարադարձում և ժամանակակից հայերենի երկու տարբերակներում, արձանագրեց ընթացակցական դերբայի առկայությունը արևմտահայերենում և բարբառներում (վազելեն, խոսելեն): Աշխատությունը, որպես այդ թեմային նվիրված ամբողջական ուսումնասիրություն, չգտնվող է հայ լեզվաբանական գրականությունում և պատահական չէ, որ այն միանշանակ արժանացավ հայագետների ամենաբարձր գնահատականին:

Բայի ուսումնասիրության ուղղությամբ կատարած գիտահետազոտական աշխատանքների հանրագումարը և բարձրակետը եղավ 1963 թ. լույս տեսած Ռայլը ժամանակակից հայերենում ստվարածավալ և մեծարժեք մենագրությունը, որտեղ ամենայն խորությամբ և փաստական հարուստ նյութի հիման վրա համակողմանիորեն քննության է առնված ժամանակակից արևելահայ գրական լեզվի բայական համակարգը (բայը որպես խոսքի մաս, բայականությունը, բայի սեռը, դերբայական համակարգը): Իրեն հատուկ գիտական բարեխղճությամբ ըստ արժանվույն գնահատելով հայ քերականագիտության մեջ բային նվիրված ուսումնասիրությունները և ամփոփելով հայ քերականագիտության նվաճումներն այդ ուղղությամբ՝ Ա. Արրահամյանը փաստական հարուստ նյութի, այդ նյութի սպառիչ ուսումնասիրության և հմուտ վերլուծության հիման վրա զարգացրեց ու հարստացրեց բայի ուսմունքը՝ միաժամանակ վերանայելով ու ճշտելով մի շարք տարածում գտած ըմբռնումներ ու հասկացություններ: Ընդունելով բայական բառույթի երկու տեսակ՝ համագրական և վերլուծական՝ նա քննության առավ դրանց առաջացման ուղիներն ու կազմության առանձնահատկությունները՝ հմտորեն համագրելով ուսումնասիրության համաժամանակյա և տարածամանակյա եղանակները: Առանձնապես արժեքավոր է բայածանցների քննությանը նվիրված բաժինը: Բացահայտելով բայածանցների դերը բայականության մեջ և տալով դրանց գիտական դասակարգումը՝ նա իրավացիորեն մերժեց այն, են, և, չածանցների սոսկածանց անվանումը՝ համոզիչ կերպով ցույց տալով, որ դրանք աննշանակ չեն և բացի բայականական դերից ունեն նաև հիմնականի քերականական արժեք: Նա այդ մասնիկներն անվանեց բաղադրության-քերականական ածանցներ՝ հակադրելով բուն քերականական ածանցներին: Ուշագրավ են նաև դիտողությունները ցն և ավառ ածանցների բայականական դերի վերաբերյալ:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում աշխատության բայի սեռի քննությանը նվիրված բաժինը: Զարգացնելով բայի սեռի տեսությունը, նա առաջարկեց բայի սեռի ուրույն դասակարգում՝ ընդունելով սեռադասեր (անցողական, անանցողական), սեռեր (ներգործական, չեզոք, կրավորական) և սեռային առումներ (պատճառական, միջին-անդրադարձ): Առանձնապես արժեքավոր է պատճառական բայերի ուսումնասիրությանը նվիրված մասը, որտեղ նուրբ դիտողականությամբ վեր հանելով ուղիղ խնդրի առանձնահատկությունները պատճառական բայերի մոտ, տվեց վերջիններիս էական, որակական տարբերությունը ներգործական սեռի բայերից: Նոր խոսք են նաև նրա դիտողությունները սեռային տեղաշարժերի և կրկնասեռությունների մասին: Ուսումնասիրելով բայի դրսևորումները ինչպես ժամանակակից գրական արևելահայերենում, այնպես էլ խոսակցական լեզվում՝ Ա. Արրահամյանը միաժամանակ արժեքավորում է դրանք, գնահատում ըստ գրական նորմայի, որով գիրքը ձեռք է բերում նաև նորմավորող բնույթ: Գրքի արժանի գնահատականը եղավ այն, որ հեղինակին բերեց զուտորի գիտական աստիճան:

Հոգվածների միջոցով Ա. Արրահամյանն անդրադարձել է նաև հայոց լեզվի պատմության և ժամանակակից հայերենի առանձին, հատկապես կնճոտ և լուսարանության կարոտ հարցերի, որոնց լուծման ընթացքում ևս երևան է գալիս Արրահամյան-հետազոտողի պրպտուն միտքը, երևույթների խորքը թափանցելու, դրանք մեկնաբանելու և գիտական ընդհանրացում կատարելու մեծ կարողությունը: Այնպես՝ Փաստեր հայերենի պատմական հնչյունափոխության մի քանի երևույթների ժամանակաշրջանի վերաբերյալ» (ԳԱ ՏՃԵԿԱԳԻՐ, 1957, № 4) հոգվածում փաստական համապատասխան նյութի հետադոտման հիման վրա Ա. Արրահամյանը հանգել է այն ճիշտ եզրակացություն, որ ալ>օ հնչյունափոխությունը կատարվել է X—XI դդ. (և ոչ թե XII—XIII դդ.): Միաժամանակ համոզիչ փաստարկներով ցույց է տվել, որ ա և օ ձայնավորներից հետո յ-ի անկումը կատարվել է IX դ., որ այդ դարից է սկսվել նաև ալ>վ հնչյունափոխությունը:

Բառաձևերի համանունության հարցի քննությանը նվիրված աշխատանքի քերականական համանունության շուրջը (ՊԲԸ, 1974, № 1) ընդարձակ հոգվածը, որտեղ հայերենի (գրաբարի և ժամանակակից հայերենի) ընձեռած նյութի հիման վրա տրված է քերականական համանունների ուրույն և ուշագրավ դասակար-

գում (ներհարացուցալին և միջհարացուցալին համանուններ)։

Հայ լեզվաբանական գրականության բարդ և իր լուծմանն սպասող հարցերից մեկն է բարդ բաների դասակարգումը։ Այստեղ ես Ա. Արբաբյանին ասել է իր հեղինակավոր խոսքը՝ առաջարկելով բարդ բաների հիմնական դասակարգումը կատարել ըստ կազմության եղանակի (համադրական և վերլուծական բարդ բաներ)։

Մեծ է Արբաբյան-գիտնականի վաստակը նաև դասական մատենագրության երկերի թարգմանության և հրատարակության պատրաստման գործում։ Այս բնագավառի աշխատանքներից առանձնապես պետք է նշել Նզելիկ Կողբացու «Նոյն աղանդոց»-ի թարգմանությունը արեւելահայերեն և հրատարակությունը ընդարձակ ներածականով ու 495 բանագիտական, լեզվաբանական բնութագրական հոդվածներով։ Գիտական արտակարգ բարեխղճությամբ կատարված այս աշխատանքը մեծ ներդրում է եղել հայագիտության բնագավառում և քաջադիմ է իր տեսակի մեջ։

Ա. Արբաբյանը մասնակցել է Աղաթանգեղոսի, Բուզանդի, Նզիշի, Կաղանկատվացու և այլոց երկերի խմբագրման ու հրատարակության հայրենանվեր գործին։ Նույնպիսի նվիրումով նա մասնակցել է նաև զրաբարի համարարառ քարտարանի կազմման սկզբունքների, համարաբառների խմբագրման գծովարին գործին։

Ա. Արբաբյանը մեկն է մեր այն նշանավոր գիտնականներից, որն իր գիտական գործունեությունը միշտ զուգակցել և զուգակցում է մանկավարժական գործունեությանը՝ իր հարուստ գիտելիքներն ու փորձը հաղորդելով սերունդներին և ակտիվորեն մասնակցելով մանկավարժական կադրեր պատրաստելու գործին։ Հաղորդվող նյութի խոր ու համակողմանի իմա-

ցություն, մատչելի ու հետաքրքիր, միաժամանակ գիտական խորությամբ մատուցում, ահա ինչով են բնորոշ նրա դասախոսությունները, դասախոսություններ, որոնք գերում են ուսանողներին՝ սերմանելով նրանց մեջ սեր դեպի մայրենին։

Մեծ է նաև պրոֆեսոր Ա. Արբաբյանի երախտիքը գիտական կադրերի պատրաստման գործում։ Այս բնագավառում ես նա աչքի է ընկնում իր արտակարգ բարեխղճությամբ ու պահանջկոտությամբ։ Նրա ղեկավարությամբ թեկնածուական դիսերտացիա պաշտպանած շատ ու շատ լեզվաբաններ մանկավարժական ու գիտական աշխատանք են կատարում հանրապետության բուհերում ու գիտահետազոտական հիմնարկներում։

Ա. Արբաբյանը նաև ակտիվ հասարակական գործիչ է։ Գիտամեթոդական հոգվածներով, դասախոսություններով նա օժանդակում է հայոց լեզվի դասավանդման գրվածքի բարելավմանը գպրոցում։

Ա. Արբաբյանի վաստակի արժանի գնահատականն էր 1965 թ. նրան Հայաստանի գիտության վաստակավոր գործչի կոչում շնորհելը և 1977 թ. ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ ընտրելը, իսկ գիտամանկավարժական և հասարակական գործունեության գնահատականը՝ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանն ու Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրերը։

Բազմալաստակ գիտնականը գտնվում է իր գիտական-ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանում։ Ցանկանք նրան քաջառողջություն և ստեղծագործական նոր վերելք է շահանայրենագիտության։

ՆՎԱՐԴ ՊԱՌՆԱՍՅԱՆ

Բաճախիցան գիտությունների զգալու